ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

Քաղ. Երևան 11 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Պետրոսյանի

ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ՝ 08. 06.2018Թ. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲՈՂՈՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ռուբեն Մանուկյանի 08.06.2018թ. մուտքագրված դիմումը Սահմանադրական դատարանի կողմից վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ Սահմանադրական դատարան դիմելու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետը չի պահպանվել (դիմումում նշված են «22» ապրիլի 2010թ. ԱԽ-6-Ո-07 ու «23» դեկտեմբերի 2009թ. քաղ. գործ թիվ ՇԴ/0587/02/09/09… կայացրած ակտերը»):

2. Դիմողը վիճարկում է Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումը վերադարձնելու հանգամանքը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 6-ամսյա ժամկետի բացթողման հարցը, ի թիվս այլնի, պետք է քննության առնվի դիմումի ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելիս՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28 և 69-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Բավարարել Ռուբեն Մանուկյանի բողոքը և դիմումը մուտքագրել Սահմանադրական դատարան:

Նախագահող՝

Դատավորներ՝

11 հունիսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/1-16